Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-244-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «Ներհամայնքային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «նրանց իջեցումը:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ շարադասությամբ.՝ «Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ նստեցնել, իջեցնել, տեղեկատվություն տրամադրել) օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ. «4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի «զամբյուղներով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ շարադասությամբ՝ «Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումներից օգտվելիս հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի ծանրոցից և ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաև աջակցող միջոցներ:»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից::
2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:
3. Սույն օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:
4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված և կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-244-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «Ներհամայնքային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «նրանց իջեցումը:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ շարադասությամբ.՝ «Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ նստեցնել, իջեցնել, տեղեկատվություն տրամադրել) օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ. «4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի

հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի «զամբյուղներով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ շարադասությամբ՝ «Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումներից օգտվելիս հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի ծանրոցից և ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաև աջակցող միջոցներ:»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 5.

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~:
6. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ~~վեց~~ երեք ամսվա ընթացքում:
7. Սույն օրենքի ~~5~~3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: ~~օրենքի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո:~~
8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված և կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-244-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011/1)* ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. 1. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:»:	Ընդունվել է	Ընդունվել է:
2.	Հեղինակ	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «երեք» բառով:		Ընդունվել է:
3.	Հեղինակ	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 3. «Սույն օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:»:		Ընդունվել է:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**